

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՍՅՈՒՆԻՔ

Հայաստանն անվանում են «թանգարան բաց երկնքի տակ»: Իրոք Հայաստանը մի հսկայական թանգարան է, որովհետև նրա ամեն մի լեռը, գյուղն ու բնակավայրը ունի իր պատմությունը:

Ամեն տարվա նման, այս տարի ևս հոգևոր ճեմարանի ուսանողները, գլխավորությամբ հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանի, չորսօրյա ուխտագնացության մեկնեցին Սյունյաց աշխարհի վանքերն ու եկեղեցիները:

Արևը նոր էր բարձրացել, երբ ուսանողները ուղղություն վերցրեցին դեպի Սյունիք:

Մասիսների սրբական գագաթների ուղեկցությամբ անցնելով Արարատյան դաշտավայրը՝ ավտոմեքենաները բարձրանում են Ծաղկունյաց լեռների ոլորապտույտները և ուղղ են գործում Վայոց ձոր:

Վայոց ձորը հարուստ է եկեղեցական և տնտեսական կառույցներով, կառույցներ, որոնք դարերի խորքից նոր սերունդներին են հասցրել հայ ստեղծագործ մտքի և հոգու հանճարը՝ յուրաքանչյուր քարին թողնելով հայ շինարարի հրաշագործ բազկի հետքերը:

Առաջին օրը ուսանողները եղան Սիսիանում, որտեղ կարճ դադարից հետո նրանք գնացին դեպի Գնդեվանք:

Գնդեվազ գյուղից հյուսիս, Արփա գետի ձախ ափին, անտառածածկ լեռնալանջին, հպարտորեն կանգնած է Ժ դարի հրաշակերտ այս կոթողը: Արտաքինից այն հիշեցնում է Ս. Հռիփսիմե եկեղեցին: Դարերի ջունչն է զգացվում եկեղեցու վիմագիր արձանագրություններին:

Գնդեվանքը կառուցել է նկարիչ Եղիշեն 936 թ.՝ Սյունյաց Սոփի իշխանուհու օժանդակությամբ: Եկեղեցու արձանագրություններից մեկում խոսելով Սոփի իշխանուհու շինարարական գործերի մասին՝ ասվում է, որ «Մատանի էր անակն Վայոց ձոր, շինեցի կսա և եդի ակն ի վերա»: Վանքի մասին ամանրամասն տեղեկություններ է հաղորդում Ստեփանոս Օրբելյանը:

Եկեղեցում, ուր ժամանակին մեծ շուքով ու հանդիսավորությամբ արարողություններ են կատարվել, ուսանողներն իրենց խմբաձայն աղոթքով կենդանություն հաղորդեցին դարավոր որմնանկարներին:

Գնդեվանքից հետո ուխտավորները գնացին Սիսիանի Ս. Գրիգոր եկեղեցի:

Եկեղեցին կառուցել է Սյունիքի Կոհապատ իշխանը՝ նահանգի թեմական առաջնորդ Հովսեփ Ա-ի (663—682) և վանական Թեոդորոսի օժանդակությամբ: Է դարի վերջին քառորդի այս կառույցի ներսում, գմբեթի տակ, կան եկեղեցու հիմնադիրների մեծադիր պատկերաքանդակները՝ համապատասխան մակագրություններով:

Իջավ Սյունյաց աշխարհի լուռ և հանգըստաբեր երեկոն, և ուսանողները առանձնացան՝ ի մի բերելու համար օրվա տպավորությունները:

Հաջորդ օրը ուխտավորները շարժվեցին Գորիս՝ Բղենո Նորավանք: Վանքը գտնվում է Գորիսի շրջանի Բարձրավան գյուղի մոտ, անտառապատ կիրճերով շրջապատված եռանկյունաձև դարավանդի վրա: Ժ դարի այս եկեղեցին անմիջապես աչքի է ընկնում հարուստ պատկերաքանդակներով: Եկեղեցու պատերին, արտաքուստ, որոշակի համակարգով, տեղավորված են եղել Քրիստոսի կյանքը պատկերող ութ բարձրաքանդակներ՝ կատարված կաթնագույն քարատախտակների վրա, որոնցից երկուսն են միայն իրենց տեղում: Այս հուշարձանախումբը 1932 թ. պատահաբար հայտնաբերել է հայ անվանի գրող Ակսել Բակունցը: Թեև եկեղեցին չի գործում, սակայն մթնոլորտն այնքան հրապուրիչ ու ներշնչող է, որ մարդ ակամայից ուզում է երգել, աղոթել և երկնքում ճախրող

արծիվների հետ վեր սլանալ: Եկեղեցու գեղեցկությունը սերտորեն ներդաշնակվում է շրջապատի չքնաղ բնությանը:

Ուխտագնացության վերջին օրը ուսանողները ուղղություն վերցրեցին դեպի Տաթև: Ճանապարհը դեպի Տաթև անցնում է ահռելի ձորով՝ ստեղծելով վախապդեցիկ ոլորապտույտներ: Ձորի միջով փրփրաբաշ Որոտանը է վազում: Հասնելով կրաքարե ժայռին՝ ափե-ափ է վարնվում, և բնական «Սատանի» կամուրջը միայն մի պահ է կարողանում սանձել կատաղած ջրերը:

Ժայռի տակից բխող հանքային ջրի փոքրիկ ավազանում լվացվելուց և հանգստանալուց հետո, ուխտավորները բարձրանում են Տաթևի վանք:

Վանքը վերանորոգման ընթացքի մեջ է: Մշակութային և հոգևոր փառավոր այս կենտրոնը ավերվել է երկրաշարժից: Ավերված վիճակում անգամ այն գեղեցիկ է. ամեն մի քար ու ծեփ, սալիկ և խոյակ, դուռ և տանիք: Գիտության այս դարբնոցում իրենց հոգիներն են հղկել բազմաթիվ հայ երիտասարդներ: Նրանք գիշեր ու ցոր ճգնել են ու ստեղծագործել, գրել են ու մեկնել՝ օրավուր հարստացնելով հայ մշակույթի գանձարանը: Գիտությունն է թևածել վանքի վրա: Եվ խորհրդանշական է Տաթև անունը, այսինքն Թող Աստված իմաստության թևեր տա, որպեսզի ուսանողները կարողանան այդ թևերով սավառնել առ Աստված և ճանապարհ հարթել դեպի տիեզերքի գաղտնիքները:

Վանքի շարժական այունը գիտնական վանականների գործունեության անխոս վկան է:

Մարդ ակնածանքով է դիտում ամեն մի խուց ու քանդակ: Այս հոգևոր օջախը ժողովրդի օրհասական պահին դարձել է նաև մարտական ամրոց:

Ուշ երեկոյան նորանոր տպավորություններով հարստացած և մխիթարված հոգիներով ուխտավորները բռնում են տունդարձի ճամփան:

ՀԱՅԿ ՍԱՐԿԱՎԱԳ ՁՈՒԼՋՅԱՆ